Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2024 թ. դեկտեմբերի 23-ին կայացած թիվ 9 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2024 թ. դեկտեմբերի 23-ին կայացած թիվ 9 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից գիտական խորհրդի նիստին մասնակցել են 27-ը:

Օրակարգ՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցութային ընտրության հարցը:
2. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գայանե Մխիթարի Հայրապետյանի ամփոփիչ ատեստավորման հարցը:
3. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի լաբորատորիայի անվանակոչության հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ Կարեն Ղազարյանը նշեց, որ կատարվել է օրակարգի փոփոխություն և օրակարգում ավելացել է ևս մեկ հարց՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գևորգ Ավագի Ավագյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխման վերաբերյալ: Կ. Ղազարյանի կողմից առաջարկված օրակարգը դրվեց քվեարկության և այն հաստատվեց միաձայն: Օրակարգը հաստատելուց հետո նախագահը անցավ հարցերի քննարկմանը:

1. ԼՍԵՑԻՆ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցութային ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ՝ կ.գ.թ. Լ.Ս. Գաբրիելյանը: Կ.Ա. Ղազարյանը նշեց, որ «Կենսաբանություն»

ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցույթին ներկայացվել է 11 անձնական գործ: Տեղեկություններ հավակնորդների մասնագիտական բնութագրերի և գիտական որակավորումների մասին ներկայացրեց Լ.Ս. Գաբրիելյանը (մրցութային հանձնաժողովի կարծիքները կցված են): Ըստ գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի կարծիքի՝ մրցույթին ներկայացված հավակնորդների գիտական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը համապատասխանում են ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298-Ն որոշմամբ սահմանված տվյալ պաշտոնին ներկայացվող գնահատման չափանիշների քանակական պահանջներին:

Ելույթներից հետո ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. **նախագահ՝** Արա Պետիկի Անտոնյան - ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ.; **անդամներ՝** Սյուզաննա Սայաթի Եսոյան - ԵՊՀ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, կ.գ.թ.; Լարիսա Արտակի Նավասարդյան - ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի «Կենսաբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի և անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն:

Փակ գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.Պ. Անտոնյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Ստորև ներկայացվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման քվեարկության արդյունքները:

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի առաջատար գիտաշխատողի թափուր պաշտոնի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Սահակյան Նաիրա Ժորայի	1 դրույք	26		1

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի ավագ գիտաշխատողի թափուր պաշտոնի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Աթոյանց Անահիտ Լեոնի	1 դրույք	27		
2.	Ավալյան Ռիմմա Էդուարդի	1 դրույք	27		
3.	Գինովյան Միքայել Մարտիկի	0,75 դրույք	27		
4.	Հովհաննիսյան Գալինա Գեորգիի	0,75 դրույք	27		
5.	Բազուկյան Ինգա Լևոնի	0,25 դրույք	27		

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի գիտաշխատողի թափուր պաշտոնի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դրույքաչափ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Մարգարյան Լուսինե Վահանի	1 դրույք	27		
2.	Ադամյան Ռուզաննա Գեորգիի	0,75 դրույք	27		
3.	Զաքարյան Նարինե Հմայակի	0,5 դրույք	27		
4.	Հակոբյան Աստղիկ Վարդանի	0,5 դրույք	27		
5.	Մարության Սեդա Վիկտորի	0,25 դրույք	27		

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել փակ գաղտնի քվեարկության արդյունքները և «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով ներկայացվող հավակնորդներին համարել ընտրված համապատասխան պաշտոններում:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի՝ չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գայանե Մխիթարի Հայրապետյանի (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Կ. Ա. Թոչունյան) ամփոփիչ ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Կ.Ա. Թոչունյանը: Ներկայացվեց կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի՝ չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գայանե Մխիթարի Հայրապետյանի կատարած աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ատեստավորել կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գայանե Հայրապետյանին, քանի որ նա հաշվետու ժամանակաշրջանում կատարել է ասպիրանտական պլանով նախատեսված ուսումնական և հետազոտական աշխատանքները:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի լաբորատորիայի անվանակոչության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Ս.Գ. Նանագյուլյանը: Ելույթ ունեցողների կողմից նշվեց, որ առաջարկվում է լաբորատորիան անվանակոչել բուսաբան, սնկաբան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ՝ Լիա Լևոնի Օսիպյանի անունով: Ս.Գ. Նանագյուլյանը ներկայացրեց Լ.Լ. Օսիպյանի ուսումնական և գիտական գործունեությունը, կրթության և գիտության ոլորտում ներդրած ավանդը և ձեռքբերումները, ինչպես նաև որոշ կենսագրական տվյալներ:

Իր խոսքում Ս. Գ. Նանագյուլյանը նշեց, որ Լ. Լ. Օսիպյանը ծնվել է 1930թ. հունվարի 15-ին Երևան քաղաքում: 1947թ. ավարտել է Երևանի թիվ 8 միջնակարգ դպրոցը, 1952թ.՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը: 1952թ. ընդունվել է ԵՊՀ բուսաբանության ամբիոն որպես լաբորանտ, 1952-1954թթ. եղել է ՀԼԿԵՄ կենտկոմի ուսանողության բաժնի վարիչ, 1954-1959թթ.՝ ԵՊՀ լեկցիոն ասիստենտ, 1960-1961թթ. գիտահետազոտական բաժնի գիտքարտուղար, 1961-1967թթ.՝ բուսաբանության ամբիոնի դոցենտ:

1967թ.-ից մինչև 2020թ. աշխատել է կենսաբանության ֆակուլտետում, զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

1959թ. Լ. Օսիպյանին շնորհվել է կենսաբանական գիտությունների թեկնածուի, 1971թ.՝ դոկտորի աստիճան: 1972թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1971-2005թթ. հանդիսացել է բուսաբանության ամբիոնի վարիչ, 1985-1990թթ. և 1999-2000թթ.՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան:

1981թ. Լ. Օսիպյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչմանը:

1986թ. Լ. Օսիպյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ« 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

2005թ. արժանացել է «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչմանը: 2005-2015 թթ. ղեկավարել է ընդհանուր կենսաբանության գիտահետազոտական լաբորատորիան, 2015թ. մինչև 2020թ. աշխատել է որպես գլխավոր գիտաշխատող:

Մայր բուհի 80 և 90-ամյակի կապակցությամբ Լ.Լ. Օսիպյանը պարգևատրվել է 2 ոսկե մեդալներով:

Հեղինակ է ավելի քան 400 գիտական աշխատությունների:

Լ. Օսիպյանը Հայաստանում փորձարարական սնկաբանության հիմնադիրն է: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական և դոկտորական թիվ 20 ատենախոսություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ առաջարկել ԵՊՀ գիտական խորհրդին, հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային միավորի անվանակոչության կարգի (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2022թ. փետրվարի 24-ի թիվ 7 նիստում) 3.2 կետը, անվանակոչել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի լաբորատորիան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լիա Լևոնի Օսիպյանի անունով:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գևորգ Ավագի Ավագյանի գիտական ղեկավարի փոփոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյանը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը: Նշվեց, որ 2022թ. դեկտեմբերի 22-ին կայացած թիվ 10 նիստի ժամանակ հաստատվել է Գևորգ Ավագի Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Առնետների որոշ ներքին օրգանների հյուսվածաբանական և ֆիզիոլոգիական փոփոխությունների գնահատումը Անդրկովկասյան գյուրզայի թույնի ազդեցության պայմաններում», Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար է հաստատվել մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ, դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը: Գիտական ղեկավարը հանգամանալից ներկայացրեց Գևորգ Ավագի Ավագյանի ղեկավարի փոփոխման անհրաժեշտությունը և առաջարկեց որպես նոր ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, կ.գ.դ. Նաիրա Մարտինի Այվազյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել որպես նոր ղեկավար ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, կ.գ.դ. Նաիրա Մարտինի Այվազյանին:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ Ի.Վ. Շահազիզյան